

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

114

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Սփյուռքի ներկայացուցիչներ

ԱՐԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ. «ԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՄԱՍՆԻԿՆ ԵՄ»

Անվանի մարդիկ

Կուզենայի այնքան ապրել, որքան կարող եմ երգել

Մանրամասներ

ՀԱՅԻ ՈԳՈՒ ՀԱՂԹԱՅՈՒՆ

ՆԱՄԱԿ ԹՈՒՐԲ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Հայրենադարձներ

Հայրենիքը տուն է, իսկ արտերկիրը՝ հյուրանոց

Սփյուռքի ներկայացուցիչներ



ԱՐԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ. «ԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՄԱՍՆԻԿՆ ԵՄ»

2011-04-18

-Պարոն Մարկոսյան, շատ ուրախ եմք Ձեզ տեսնել Հայաստանում: Հաճախ ե՞ք լինում այստեղ:

-Այո: Գործի բերումով ինձ անհրաժեշտ է լինում երեք ամիսը մեկ անգամ այցելել «Մենթոր գրաֆիքսի» Հայաստանի մասնաճյուղը:

Բացի այդ, այստեղ են ծնողներս, հարազատներս, ընկերներս: Երբ գալիս եմ, ընկերներով հանդիպում եմ և ստացվում է, որ ինձ հետ ավելի հաճախ են հանդիպում, քան իրար հետ, չնայած Հայաստանում են ապրում: Այդ առումով, ես ինձ Հայաստանից չեմ գատում և շարունակում եմ հայաստանցի մնալ:

-Խնդրում եմ պատմեք Ձեր մասին, ընտանիքի, ծնողների, արմատների մասին:

-Ծնվել եմ Երևանում, 1984 թվականին ավարտել եմ Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը, որից հետո երեք տարով մեկնել եմ Մոսկվա՝ ասպիրանտուրայում սովորելու, և 1988-ին ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայում պաշտպանել թեկնածուականը՝ «մաթեմատիկոս» մասնագիտությամբ: Այնուհետև վերադարձել եմ Երևան և դասավանդել ԵՊՀ-ի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում, մինչև 1992 թվականին ԱՄՆ մեկնելու:

Ծնողներս երևանցի են, արմատներով՝ Մուշից, Ղարսից, Երևանից: Երևանի պետական համալսարանի դասախոսներ են: Հայրս այսօր էլ դեռ դասավանդում է:

Կնոջս՝ Անահիտի հետ սովորել ենք նույն դպրոցում և 1979թ.-ին միասին ավարտել ենք :132 դպրոցի մաթեմատիկական թեքումով դասարանը: Անահիտը մասնագիտությամբ ֆիզիկոս է: Ավարտել է Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետը: Բայց այսօր աշխատում է որպես ծրագրավորող:

Ունենք երկու երեխա:

Որդիս՝ Վահեն ծնվել է Երևանում, 24 տարեկան է: Անցյալ մայիսին ավարտել է Սան Խոսեի համալսարանի բակալավրատուրան և այս տարի ընդունվել է Նյու Յորքի Կոլումբիա համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի մագիստրատուրան:

Աղջիկս՝ Լիլիթը ծնվել է ԱՄՆ-ում՝ Միլիկոնային հովտի քաղաքներից մեկում՝ Սանտա Կլարայում, 17 տարեկան է, սովորում է ավագ դպրոցի 11-րդ դասարանում: Պատրաստվում է ավագ դպրոցի վերջին կիսամյակը ուսանել Երևանի Վալդորֆյան դպրոցում: Լիլիթը նաև շատ տարված է բալետով, որով լրջորեն զբաղվում է մանուկ հասակից: Երբ Լիլիթը Երևանում է լինում, մասնակցում է պարարվեստի ուսումնարանի լավագույն ուսուցիչների դասերին:

-Պարոն Մարկոսյան, ի՞նչ ճանապարհներ Ձեզ տարան Ամերիկա:

-1992 թվականին մեկնեցի Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ իմ մասնագիտությամբ աշխատանք գտնելու նպատակով: Ես մաթեմատիկոս եմ, ծրագրավորող: Այն ժամանակ Հայաստանում պահանջարկ չկար: Մի քանի դժվար ամիսներ անցկացրեցի Սան Ֆրանցիսկոյում, մինչև որ կարողացա Միլիկոնային հովտում աշխատանքի ընդունվել «Քոմփաս դիզայն աութսայդինգ» ընկերությունում: Հաստատվեցի Կուպերտինո փոքրիկ քաղաքում, հետո Հայաստանից այնտեղ տեղափոխեցի ընտանիքս: Այդ տարիներին Միլիկոնային հովտի 90-ականների տնտեսական վերելքը դեռ չէր սկսվել, և գործ գտնելը բավականին դժվար էր: Քանի որ Խորհրդային Միությունը դեռ նոր էր փլուզվել և սահմանները նոր բացվել էին, ես փաստորեն հայտնվեցի ամենաառաջին հայաստանցիների շարքում, որոնք նույնպես ճակատագրի բերումով իրենց տեղը գտան ԱՄՆ-ի բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններում:

Սա վճռական մի պահ էր իմ կյանքում, որը կանխորոշեց իմ հետագա աշխատանքային գործունեությունը: Չեմ կարող ասել, թե այս իմ ձգտումը դեպի միկրոչիփերի նախագծման բնագավառը պատահական էր, քանի որ դեռ մանկությանս տարիներից, նախ և առաջ հանձինս ծնողներիս, շրջապատված եմ եղել այնպիսի մարդկանցով, որոնք զբաղվել են Խորհրդային Միության բարձր տեխնոլոգիաների զարգացումով, և մասնավորապես միկրոչիփերի նախագծման (պրոեկտավորման) ավտոմատիզացիայով: Իմ առաջին ուսուցիչը եղել է հայրս, որը 70-ական թվականներին ղեկավարում էր «Մերգելյանի Ինստիտուտի» համապատասխան բաժինը և ճանաչված մասնագետ էր ԽՍՀՄ-ում:

-Կմանրամասնե՞ք:

-Միրով: Ինչպես արդեն նշեցի, իմ ամերիկյան աշխատանքային կարիերան սկսեցի 1992թ.-ին «Քոմփաս» ընկերությունում: Այնուհետև 1996թ.-ին ինձ հրավիրեցին աշխատելու մի նորաստեղծ հիմնարկ՝ «Արիստո թեքնոլոջի», որը զբաղվում էր էլեկտրոնային նախագծման ավտոմատիզացիայի առաջադեմ մեթոդներով: Երեք տարի անց՝ 1999 թվականի ապրիլին Հայաստանում հիմնադրեցի ծրագրային «Արսետ» ընկերությունը, որը մշակում էր սոֆթվերային համակարգեր «Արիստո թեքնոլոջի» համար: Ստեղծման պահին «Արիստոն» ծրագրավորողների շատ փոքրիկ, վեց հոգանոց մի խումբ էր, որը ընդամենը չորս տարվա ընթացքում դարձավ վաթսուսու աշխատող ունեցող, հզոր տեխնիկական կարողություններով մի հիմնարկ, և իր ներուժով գրավեց «Սինոփսիս» ընկերության ուշադրությունը: Արդյունքում, 2003 թվականին «Արսետը» դարձավ առաջին ընկերությունը, որը «Սինոփսիսը» գնեց Հայաստանում և դրանով հիմք դրեց իր ամենամեծ արտասահմանյան ներկայացուցչությանը, որը այսօր Հայաստանի մեծագույն սոֆթվեր ընկերությունն է՝ ավելի քան 500 ինժեներ աշխատուժով: Կուզեի նաև նշել, որ «Արսետը» առաջին երկու ընկերություններից մեկն է, որը հայտնվեց «Վիասֆեր տեխնոլոգիայում»...

Ոգևորված «Արսետի» հաջողությունով, 2003թ.-ին ես համակուրսեցի ընկերներիս՝ Մուրեն Ալեքսանյանի և Սեդրակ Մարգիսյանի հետ, (ասեմ, որ Մուրենը և Սեդրակը այժմ բնակվում են Միլիկոնային հովտում), հիմնեցինք մի նոր ընկերություն՝ ”Պոնտե սոլուշնս”, որը նույնպես նոր,

բարձրտեխնոլոգիական ծրագրերի համակարգ էր մշակում: Բիզնեսի բնույթով պայմանավորված, «Պոնտեի» գլխավոր գրասենյակը գտնվում էր Միլիկոնային հովտում, բայց ընկերության սոֆթվերային համակարգի մշակումը ամբողջությամբ կատարվում էր Երևանում: 2008թ.-ին, «Մենթոր գրաֆիքս» ընկերությունը, որը «Մինոփսիս»-ի համար երկրորդ ամենամեծ մրցակիցն է, գնեց «Պոնտե»-ն և իր օֆիսը հաստատեց Երևանում: Այսօր «Մենթոր գրաֆիքս»-ի հայաստանյան մասնաճյուղն ունի ավելի քան վաթսուն աշխատող և արագ տեմպերով ընդլայնվում է: Պլանավորում ենք մինչև եկող տարվա վերջ ունենալ 150 կամ ավելի աշխատող: Ես մինչև այժմ աշխատում եմ «Մենթոր գրաֆիքս»-ում:

Ամփոփելով մասնագիտական թեման, կուզեի ասել, որ շատ հպարտ եմ, որ վերջին տասներկու տարիների՝ իմ և ընկերներիս աշխատանքի արդյունքում, էլեկտրոնային պրոեկտավորման ավտոմատացման՝ աշխարհի երկու ամենամեծ առաջատար ընկերություններ՝ «Մինոփսիսը» և «Մենտոր գրաֆիքսը» մուտք գործեցին Հայաստան և շարունակում են լուրջ ներդրումներ կատարել հայաստանյան բարձր տեխնոլոգիաների ոլորտում:

-Պարոն Մարկոսյան, ասացիք, որ հաճախ եք լինում Հայաստանում: Ի՞նչ փոփոխություններ եք նկատում , դրական են, թե ...

-Քանի որ հաճախ եմ գալիս, դժվար եմ նկատում փոփոխությունները: Բայց, անշուշտ, դրական տեղաշարժ կա: Ասենք, թեկուզ, երկիր մուտք գործելն արտասահմանցիների համար ավելի դյուրին է դարձել: Գործի հետ կապված, որպես օրինակ, կարող եմ ասել, որ մաքսային ծառայությունները ավելի հեշտացրել և թափանցիկ են դարձրել իրենց գործընթացը: Եվս մեկ բան կուզեի նշել, որը անկասկած աչքի է ընկնում՝ վերջին տարվա ընթացքում վարորդները դարձել են ավելի կարգապահ, և դա շատ գովելի է: Ասածս այն չէ, թե բոլորը հիմա օրենքի համաձայն են երթնելում, բայց դրական միտումը նկատելի է, և դա պետք է խրախուսել...

-Ի՞նչ ինքնազգացողություն ունեիք, երբ առաջին անգամ հայտնվեցիք ԱՄՆ-ում:

-Զգացողություններս միանշանակ չեն: Ամենակգբում դժվար էր, իհարկե: Ունեի որոշ դժվարություն հաղորդակցվելու առումով, քանի որ անգլերենս զարգացած չէր: Բայց արագ ինտեգրվեցի և ինձ շատ լավ եմ զգում: Ասեմ, որ Ման Ֆրանցիսկոյի ծովածոցի շրջանը, որտեղ գտնվում է Միլիկոնային հովիտը, շատ յուրահատուկ տեղ է: Իր բնակչության բազմազանությամբ և միմյանց նկատմամբ հանդուրժողականությամբ, այն առանձնահատուկ է նույնիսկ ամերիկյան չափանիշներով:

Եթե թույլ կտաք, մի դրվագ պատմեմ այս կապակցությամբ: Երբ դեռ Հայաստանում էի ապրում, հեռուստացույցով վավերագրական ֆիլմերի մի շարք դիտեցի ԱՄՆ-ի տարբեր նահանգների մասին, նկարահանված հենց ամերիկացիների կողմից: Երբ խոսքը գնաց հյուսիսային Կալիֆոռնիայի մասին, որի բնակչության մեծամասնությունը ապրում է Ման Ֆրանցիսկոյի շրջանում, հեղինակը հայտարարեց, որ այստեղ ապրում են մարդիկ, որոնք բոլորովին տարբեր են իրարից և աշխարհի բոլոր մյուս մարդկանցից: Շարունակելով միտքը նա ասաց, որ այստեղի ամբողջ բնակչությունը կազմված է «սպիտակ ազգավներից» (բնականաբար, բառիս լավ իմաստով): Միայն երբ հայտնվեցի Ման Ֆրանցիսկոյում, հասկացա այդ խոսքերի իսկական իմաստը: Եվ պետք է խոստովանեմ, որ ես ինձ շատ լավ եմ զգում «սպիտակ ազգավների» շրջապատում, և մի գուցե ինքս էլ դարձել եմ այդպիսինը:

-Ի՞նչ կասեք Ման Ֆրանցիսկոյի հայկական համայնքի մասին:

-Ման Ֆրանցիսկոյի համայնքը շատ փոքր է Լոս Անջելեսի կամ Բոստոնի համայնքների հետ համեմատած: Սակայն, ինչպես և վերը նշված մեծ համայնքները, մեր շրջանի հայկական համայնքը միատարր չէ: Կան հնաբնակներ, որոնք այստեղ վաղուց են հաստատվել: Մոտ երեսուն-քառասուն

տարի առաջ մեծ հույս եկավ Լիբանանից, Սիրիայից, մյուս արաբական երկրներից, ինչպես նաև Իրանից: Վերջին 10-20 տարիների ընթացքում շատ են եկել Հայաստանից, Բաքվից և նախկին ԽՍՀՄ-ի այլ վայրերից: Սույն փաստը բացատրում է, թե ինչու Սան Ֆրանցիսկոյի, ինչպես նաև ԱՄՆ-ի մյուս հայկական համայնքները միաձուլվել են: Անշուշտ, հիմնականում բոլոր «ենթա-համայնքները», բարեկամական վերաբերմունք ունեն իրար նկատմամբ, բայց մյուս կողմից, իրենք միանշանակ միաձուլվել են: Դրա համար կան տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, որոնք քննարկումը մի առանձին գրույցի թեմա կարող է լինել:

-Դուք ո՞ր խմբին եք դասում Ձեզ:

-Եթե մաթեմատիկորեն խիստ արտահայտվենք, դա կհնչի այսպես՝ ըստ սահմանման ես «հայաստանցի» եմ: Բայց շատ կաշկանդված ու տհաճ եմ զգում, երբ ինձ կամ մեկ ուրիշին սահմանում և սահմանափակում են նման պիտակով: Ես մասնակցում եմ և ունեմ մտերիմ ընկերներ բոլոր հայկական «ենթա-համայնքներում»: Նաև փորձում եմ հնարավորինս աջակցել տարբեր համայնքների միասնականացման շարժմանը:

-Իսկ ի՞նչ եք կարծում, ի՞նչը կարող է համախմբել համայնքի բոլոր անդամներին, նպաստել ազգային գաղափարի վերածնունդ:

-Համայնքի առաջադեմ մարդիկ փորձում են ավելի մոտեցնել ներհամայնքային տարբեր շերտերը: Քանի որ Սան Ֆրանցիսկոյի հայկական համայնքը շատ փոքր է, այս շրջանում ընդամենը մեկ միջնակարգ հայկական դպրոց կա: Դպրոցն իբրև կրթական և մշակութային կենտրոն, վստահորեն կարող է համախմբել հայերին, եթե խիզախ լինի ու ստանձնի այդ կարևոր և դժվար դերը:

Կարելի է բոլորին համախմբել համահայկական գաղափարի շուրջ: Այ օրինակ, այս տարի հունվարին մեր համայնքի հյուրն էր Ցվետանա Պասկալևան: Նրա՝ Արցախյան պատերազմին նվիրված ֆիլմերի ցուցադրությանը միահամուռ կերպով մասնակցեցին համայնքի շատ տարբեր կազմակերպություններ: Ստեղծվել էր շատ ջերմ ու միասնական մթնոլորտ: Ես հավատում եմ, որ քայլ առ քայլ, բոլորին հուզող հիմնահարցերի շուրջ հնարավոր է համախմբվել, միասնական դառնալ: Բայց կան շատ ուրիշ, ոչ կենսական խնդիրներ, որոնք ավելի ճիշտ ձևով կլուծվեն, եթե լինի բազմակարծություն և բաց քննարկում:

Իմ կարծիքով, սա միայն Սփյուռքի խնդիր չէ: Հայաստանում ևս շատ կարևոր պրոցեսներ են տեղի ունենում, միտում կա, որ սփյուռքահայերը գալիս են ու հիմնավորվում են Հայաստանում՝ հայ հասարակության մեջ ստեղծելով նոր դինամիկա...

-Այդուհանդերձ, արտագաղթը շարունակվում է...

-Իմ կարծիքով, արտագաղթը միայն բացասական երևույթ չի: Դրական կողմ էլ ունի: Հայաստանցիները գնում են, աշխարհ են տեսնում, ընդօրինակում են այլ ժողովուրդների, մշակույթների դրական կողմերը ու բերում են այդ փորձը ետ՝ Հայաստան: Հազվադեպ է լինում, որ կապը լիովին կտրվում է: Առավել ևս, կան որոշ բացառիկ դեպքեր, երբ արտագաղթած մեր հայրենակիցը ընդմիջտ վերադառնում է Հայաստան:

Այո, հազվադեպ երևույթ է, բայց կան վառ օրինակներ: Իմ նախկին կուլեգաներից մեկը, «Արսետի» առաջին աշխատակիցներից՝ Վահագն Պողոսյանը, 2000թ. մինչև 2003թ. ապրելով Սիլիկոնային հովտում և աշխատելով առաջադեմ հիմնարկներում, վերադարձավ Հայաստան և 2003թ. այստեղ հիմնեց «Ինստիգեյթ» ընկերությունը, որտեղ այսօր աշխատում է 120 մասնագետ: «Ինստիգեյթը» համագործակցում է համաշխարհային տարբեր առաջատար ընկերությունների հետ: Բացի այդ, Վահագնը մշակել է թրեյնինգային ծրագրեր և կազմակերպել է ծրագրավորման ուսումնական կենտրոններ Երևանում, Գյումրիում, Վանաձորում և շուտով նաև՝ Ստեփանակերտում:

Եթե արտագաղթողների 100-ից, նույնիսկ 1000-ից մեկը գա ու օգտակար լինի Հայաստանին, զարգացնի որևէ բնագավառ, ինչպես Վահագն Պողոսյանը առաջ է տանում բարձր տեխնոլոգիաների ոլորտը, իմ կարծիքով, այս պարագայում Հայաստանը ավելի կշահի, քան եթե արտագաղթ ընդհանրապես չլիներ և հայաստանցիների համար այսպիսի հնարավորություններ չստեղծվեին:

Այս արտառոց դեպքերի քանակը կարող է տասնապատկվել և նույնիսկ դառնալ մասսայական երևույթ, եթե Հայաստանի կառավարությունը մշակի և իրագործի պետական ծրագիր, որը արտագաղթած, և ավանդական սփյուռքի տաղանդավոր հայությանը կխրախուսի գալ Հայաստան և իր արժեքավոր փորձը ներդնել հայ հասարակություն զարգացման մեջ: Ես պատկերացում եմ, որ նման ծրագրի նպատակը պետք է լինի հայրենադարձների համար այնպիսի պայմաններ ստեղծել, որ իրենց համար դա լինի ոչ թե «գոհաբերություն հանուն հայրենիքի», այլ ցանկալի և բարենպաստ կյանքի և կարիերայի զարգացում: Մրա համար նոր անիվ հորինել պետք չի՝ նման օրինակներ աշխարհում կան և եզակի չեն:

Կարծում եմ, որ Մփյուռքի նախարարության գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի նման համաշխարհային փորձի ուսումնասիրությունը, այդպիսի գործնական ծրագրի մշակումը Հայաստանի համար և իհարկե, այս գործընթացում առաջատարի դերը ստանձնելը:

Եւ վերջում, ի՞նչ կմաղթեի Հայաստանին, ուրեմն նաև ինձ, որովհետև ես Հայաստանի մի մասնիկն եմ: Իհարկե միայն բարգավաճում, բարօրություն և խաղաղություն:

Անվանի մարդիկ



Կուզենայի այնքան ապրել, որքան կարող եմ երգել

2011-04-19

-Մաեստրո, ինչո՞ւ որոշեցինք Հայաստանում նշել Ձեր ծննդյան 75 եւ ստեղծագործական 50-ամյակները:

-Ինչո՞ւ որոշեցի... որովհետեւ չեմ սպասում նվերի, այլ աշխատում եմ ինքս նվեր անել Հայաստանին: Այստեղ՝ Երեւանում եմ ծնվել ու ապրել, հայ եմ եւ արվեստում էլ ուղիս, որ անցել է Աֆրիկայից մինչեւ Ճապոնիա, Եվրոպայից մինչեւ Ամերիկա, այդպես էլ անցել եմ որպես Վահան Միրաքյան՝ զերծ պահելով ինձ առավել արտիստիկ անուն ընտրելու գայթակղությունից: Հաջողություններս միշտ փորձել եմ ներկայացնել ոչ թե իմ անունով, այլ միշտ ազգությունս ընդգծելով, եւ արդյունքում եվրոպական մամուլը շատ հաճախ գրել է՝ «Հայ տեների մեծ հաջողությունը»: Մի խոսքով, եկել եմ ոչ թե շնորհավորանքի, այլ իմ ժողովրդին կրկին ներկայանալու, կրկին ասելու, որ կամ ու երգում եմ: Եւ կուզենայի այնքան ապրել, որքան կարող եմ երգել:

Իսկ ինչպիսի՞ն է լինելու նվերը:

Կլինի հորեյանական երեկո յուրահատուկ համերգային ծրագրով՝ լի անակնկալներով: Իսկ ընդհանրապես իմ ստեղծագործական կյանքի ընթացքում ինձ համար նոր չեն բարեգործական համերգները: Դեռեւս Մպիտակի երկրաշարժից հետո Սյունիսենում Գերմանիայի սիմֆոնիկ նազախմբի հետ եւ հինգ հայ օպերային լավագույն երգիչների՝ Անաիս Պոզապալյանի, Սոնա Ղազարյանի, Կարպիս Բոյաջյանի, Էդուարդ Թումաջյան եւ իմ մասնակցությամբ բարեգործական համերգ կազմակերպվեց, եւ ամբողջ հասույթը՝ 11 մլն գերմանական մարկ, տրամադրվեց Հայաստանին: Օրինակները կսահմանափակեմ այսքանով, միայն ասեմ, որ բազում բարեգործական համերգները, որոնք կազմակերպել եւ որոնց մասնակցել եմ, զերծ են եղել ազգային պատկանելությամբս պայմանավորելուց: Կարծում եմ՝ դա գործունեության մի տեսակ է, որտեղ առանցքը մարդասիրությունն է:

Ի՞նչ է լսելու երեւանյան ձեր համերգի հանդիսատեսը:

Համերգի ծրագիրը մանրամասնել չեմ ուզում ինչ-որ բաներ անկնկալ թողնելու համար: Բայց ասեմ՝ որպես Հայաստանում ապրած եւ որոշակի ճանաչում ձեռք բերած երգիչ, չեմ կարող հանդես գալ առանց տարբեր արվեստագետների մասնակցության: Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլը կմասնակցի համերգին, քանի որ այնտեղից եմ սկսել երգչի իմ ճանապարհը. երրորդ կուրսի ուսանող էի, երբ Ալթունյանը հրավիրեց որպես մենակատար, եւ անսամբլի հետ հյուրախաղերի մեկնեցի Եգիպտոս, Սիրիա եւ Լիբանան: Այնտեղ շատերն ասում էին. «Այս սիրուն երիտասարդը «Ես իմ անուշ Հայաստանից ե», ես էի երգում այդ գործը: Համերգին կմասնակցեն նաեւ վաստակավոր հայ արվեստագետներ, ինչպես նաեւ Եվրոպայից ժամանած հյուրեր:

Ունկնդրին կներկայացնենք այն, ինչ լիիրավ պետք է կոչել բարձրակարգ երաժշտություն, իսկ այն, ինչ այսօր կա հայաստանյան երաժշտության աշխարհում, ըստ ձեզ, որքանով կարելի է համարել բարձրակարգ:

Անշուշտ կա բարձրակարգը: Բայց այն ներկայացնելու միջավայրը, բարձրացնելու, այլ մակարդակի եւ ճաշակի բերելու համար քիչ են ժամանակ առ ժամանակ երեւացող վառ առկայծումները: Ասենք օպերային լավ ներկայացում բեմադրելու եւ խաղացանկում պահելու համար հարկավոր է ոչ թե մեկ երկու առաջնակարգ մենակատարի, հրավիրյալ հռչակավոր մասնագետների ներկայություն, այլ ...մի ամբողջ բույլ: Ժամանակին մեր օպերային թատրոնը հարուստ էր բարձրակարգ օպերային ներկայացումներով նաեւ դրա շնորհիվ: Հիմա շատ ենք հեռացել բարձրակարգ երաժշտությունից, ճաշակից, եւ կարծում եմ՝ պիտի աշխատենք երիտասարդներին ներկայացնել արժեքավոր արվեստը այնպես, որ ծնված օրվանից լսեն, որպեսզի ականջը չսովորի այն թուրքական արաբական երգերին, որոնք հայրեն են երգվում: Իհարկե առանց աշխարհից կտրվելու լավագույնին պետք է հասնենք:

Իսկ դրա ուղին ո՞րը կարող է լինել:

Ցավալի է հայկական երաժշտության անկումը տեսնելը: Համենայնդեպս այն, ինչ Հայաստանում լսվում է ամենուրեք, շատ հաճախ դժվար է երաժշտություն անվանել, բայց ունկնդիր ունի: Հարկ է, որ ռադիոյի, հեռուստատեսության ծրագրերը կազմելիս, այս կամ այն երաժշտությունը մարդկանց շարունակաբար ներկայացնելուց առաջ նկատի ունենան, որ գալիս է մի տարիք, երբ արդեն ուշ է լինում մարդու մեջ այլ ճաշակ մշակելու համար: Կարելու է, որ չուշանանք ու երեխայի մեջ ճաշակ մշակենք: Մինչդեռ այսօր ինչ են լսում Երեւան - Լոս Անջելես - Երեւան գծից այս ու այն կողմ չնայող հայ աստղերին:

Աշխատո՞ւմ եք հայ երիտասարդների հետ, հայաստանյան համապատասխան ուսումնական հաստատությունների ու մարմինների հետ որեւէ համագործակցություն ունե՞ք:

Ցանկությունը միշտ եղել է, բայց իրականացմանը նպաստող հանգամանքները, ցավոք, բավականչափ չեն: Այս այցիս վարպետության դաս տվեցի Կոնսերվատորիայում: Հայաստանի հետ մշտական համագործակցության եզրեր չկան, չնայած երբեք էլ դեմ չեմ եղել դրանք գտնելուն, բայց միայն իմ ցանկությունը քիչ է: Հայ ուսանողներ ունեցել եմ: Երաւեւանի կոնսերվատորիան ավարտած, բայց ոչ լավ երգչական պատրաստվածությամբ եկել են ինձ մոտ, չասեմ ում մոտ ուսանելուց հետո, եւ կարողացել են մեկ տարի անց աշխատանք գտնել:

Հայկական երաժշտության պրոպագանդումը ձեր գործունեության շրջանակներո՞ւմ է:

Իհարկե: Բացի այն, որ երգացանկումս մշտապես կան հայ կոմպոզիտորների գործեր, աշխատում եմ նաեւ ուսանողներիս հետաքրքիր դարձնել մեր՝ հայկական երաժշտությունը: Թայվանից մի ուսանողուհի ունեմ երգում է Կանաչյանի Օրորը՝ պորտուգալուհի ուսանողուհիս՝ Ծիծեռնակ՝ Նրանց կատարումների տեսագրությունները կան եւ առիթ եղել է այստեղ՝ Հայաստանում իմ

մասին պատրաստված հաղորդումներում դրանք օգտագործելու: Ի դեպ ուսանողներիցս ոչ մեկին չեմ ստիպում հայկական գործ կատարել: Պարզապես ներկայացնում եմ մեր երաժշտությունը եւ հետաքրքրվում հավանում ու կատարում են: Ստիպելն անկարելի է. երաժշտության մեջ մեծահոգի պետք է լինել: Երբ ԽՄԶՄ 138 երգիչներից առաջին տեղին արժանացա եւ հնարավորություն ստացա սովորելու Լա Սկալայում իմ մաեստրո Ջեննարո Բառոային հարցրեցի, թե ինչ տարբերություն կա ռուսական ֆրանսիական ոկլալի դպրոցների մեջ: Ժպտաց, ասաց՝ ոչ մի տարբերություն: Ասաց կա մեկ դպրոց, այն է՝ երգիչը պետք է երգի իր բնական ձայնով, քանի որ ինչպես չկա աշխարհում մատնահետքի կրկնություն այնպես էլ ձայնի օրինակ: Յուրաքանչյուր տենորի ձայն յուրովի է հնչում:

Տաղանդավոր հայ երիտասարդներն այսօր ի՞նչ հնարավորություններ ունեն Լա Սկալա հասնելու:

Իմ մասնագիտական բոլոր հնարավորությունները պատրաստ եմ ծառայեցնել այդ նպատակին: Մի նախագիծ ունեմ, որը պայմանականորեն կոչել եմ 'Կրթություն, գիտություն եւ արվեստ հայոց ազգի գեներն է մե՞ծ եւ դեռ պետք է ներկայացնեմ վարչապետ Տիգրան Սարգսյանին: Այս նախագիծն էլ մեծապես կնպաստի հայկական մշակույթային դաշտի առողջացմանն ու հարստացմանը: Իմ 'Վահան Միրաքյան' հիմնադրամի միջոցով մտադիր եմ թելեթոն իրականացնել եւ հավաքված դրամական միջոցները ներդնել Հայաստանում արվեստի զարգացման գործում: Եւ եթե ինձ չհրավիրեն Հայաստան, որպեսզի երգիչների հետ պարապեմ, ես կկանչեմ նրանց իմ մոտ լավ մասնագետ դարձնելու համար: Պատրաստ եմ ամենայնս օգտակար լինել: Հիմա Հայստանում եմ եւ ովքեր ուզում են, կարող են հանգիստ օգտագործել ներկայությունս եւ մարզել իրենց ձայնն իմ օգնությամբ: Ինքս էլ հեռու չեի մնա այդ հնարավորությունից, եթե մաեստրոս ողջ լիներ: Երգիչը երբեք չի կարող ասել, թե ես հասա գագաթին եւ վերջ: Պետք է միշտ նոր բարձունքներ վերցնել:

Ի՞նչ խորհուրդ կտայիք երիտասարդ կատարողներին:

Արդեն Հայաստանում չեի, երբ իմացա, որ որդիս երգում է եւ իմ ձայնագրությունները միացնում ու փորձում է գնալ կրկնօրինակման ուղով: Խիստ անհանգստացա եւ անմիջապես զանգահարեցի ասելու, որ երգի իր բնական ձայնով առանց որեւէ մեկին կրկնօրինակելու: Մա է ասելիքս յուրաքանչյուր կատարողի եւ այն, որ անեն կարեցածը առանց կոչումներին կարեւորություն տալու: 1978 թվականին վերջին հյուրախաղերս էին Երեւանի օպերային թատրոնի հետ Մոսկվայում: Ծրագրում Արմեն Տիգրանյանի 'Անուշ', Ալեքսանդր Հարությունյանի 'Մայաթ Նովա', Բելինիի 'Նորմա', Չայկովսկու 'Իոլանտա' օպերային ներկայացումներն էին: Բոլոր չորս ներկայացումներում մասնակցում էի որպես գլխավոր տենորային դերերգերի մենակատար: Այդ հյուրախաղերից առաջ շնորհեցին Հայաստանի ժողովրդական արտիստի կոչում: Բայց երբ բեմ ես ելնում մնում ես միայնակ ձայնային տվյալներիդ հետ: Մա էլ երեւի իմաստ ունի, որ հիշեն երիտասարդ կատարողները:

Մանրամասներ



ՀԱՅԻ ՈԳՈՒ ՀԱՂԹԱՍՅՈՒՆ

2011-04-21

Ավելին, այն կառուցվելու է ոչ միայն Հայաստանի և աշխարհասփյուռ հայության միջոցներով, այլև Հայաստանի, Արցախի և աշխարհի տարբեր անկյուններից ուղարկված ԳՐԱՆԻՏՈՎ: Քարից սերված, քարաշատ երկրում ապրած ազգ, ով դաստիարակվել է քարից, քար՝ դարձած սրբազան խաչքար ու հազարամյա վանք: Հայաստան ուղարկելով հեռավոր երկրի՝ իրենց երկրորդ հայրենիքի գրանիտը, դրան հաղորդելով իրենց հոգու և սրտի ջերմությունը, մտքերն ու հույզերը, հայը մեկընդմիջտ կհաստատվի Հայաստանի սրտում՝ մի քանի սերունդ առաջ անցնելով, մշտական գրանցում ստանալով նախնիների Հայրենիքում՝ նրան միանալով նոր, անտեսանելի լարերով:

Հատկապես այս գաղափարն էլ կգրավի բոլորին, և յուրաքանչյուր հայի մասնակցություն՝ թեկուզ

խորհրդանշական, կղառնա ներկայության՝ հայրենիքի սրտում գործելու հնարավորություն: Հատկապես Հայաստանի սրտում ներկայության, ներկա լինելու գաղափարը պետք է ընկնի Հանրապետության Գլխավոր հրապարակում կառուցվող կոթողի հիմքում, որը պետք է և կարող է դառնալ ազգի միասնության սկիզբը, հիմքը...

Դարեր շարունակ հայը երագում է ՄԻԱՎՈՐՎԵԼ... Մեզ փորձեց միացնել Տիգրան Մեծը (տարածքով), Գրիգոր Լուսավորիչը (կրոնով՝ քրիստոնեությանը), Մաշտոցը (այբուբենով), Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (միասնական և անբաժանելի Հայաստանով)... Մակայն ճակատագիրն ու պատմությունը մեզ ավելի ու ավելի ցրեցին աշխարհով մեկ: Այնպես որ, կենտրոնախույս ուժի հաղթահարման անհրաժեշտությունը, միասնությունը՝ այսօր, այս ագրեսիվ ու անընդհատ փոփոխվող աշխարհում, ավելի քան երբևէ արդիական է և անհրաժեշտ, քանի որ միասնության գաղափարը այսօր էլ բոլոր հայերի համար ունի ոգեշնչող, ոգևորող և հաղթական նշանակություն:

Իսկ ի՞նչ ճիշտ կլինեք առաջարկել կառուցել Հանրապետության հրապարակում, որպեսզի այն հասկանալի, ընկալելի և ընդունելի լինեք աշխարհասփյուռ հայության համար և որևէ մեկի կողմից չլինեք հերքելի: Միանշանակ է՝ մեր անկախ երրորդ հանրապետության, Արցախյան հաղթանակի, հայ ոգու տոկունության, կորովի ու հաղթանակի խորհրդանիշը՝ ՀԱՂԹԱՍՅՈՒՆԸ, որպես նշան մեր հաղթանակած ժողովրդի:

Հաղթասյան համագգային շինարարությունը և հենց հաղթասյունը՝ միանշանակ ձեռք կբերի այնպիսի իմաստ, որն անհնար է գերազանհատել: Նախևառաջ կմիավորվեն բոլորը՝ մինչև վերջին մարդը, քանի որ կկառուցեն ոչ թե որևէ անհատի հուշարձան, որին ոչ բոլորն են ընդունում, ոչ թե եկեղեցի, որը, ցավոք, միացնում է ամենևին էլ ոչ բոլոր հայերին, ոչ թե մարգարախ կամ մշակութային պալատ, որի շահագործումից կարող է շահ ստանալ ինչ-որ մեկը, այլ իսկապես միավորող խորհրդանիշ, որից չի կարող որևէ մեկը շահույթ ակնկալել կամ օգտագործել շահադիտական նպատակներով. այն կպատկանի բոլոր հայերին և ողջ աշխարհին, ինչպես Էյֆելյան աշտարակը:

Այսպիսով, հաղթասյունը կոչված է և անպայման կղառնա այն առանցքը, որը կմիավորի մեր ժողովրդին, կղառնա ձգողականության կենտրոն, ազգի ողջապտույտի առանցքը և նոր ժամանակի հաշվարկային կետը: Այս գաղափարում գլխավորը ոչ այնքան սյան կառուցումն է՝ որպես այդպիսին, որքան բարոյահոգեբանական այն ազդեցությունը, որ այն կունենա մեր ժողովրդի գիտակցության վրա: Ի դեմս այս համագգային կառույցի՝ ազգը վերջապես ձեռք կբերի ձեռակերտ մի հուշարձան, որը մեկտեղ կժողովի Հայկի բոլոր սերունդներին: Անհատականությունների ազգ, ով որպես առաջնորդ երբևէ մեկին չի ընդունել, այսպիսով ձեռք կբերի մի կառույց-գաղափար-առաջնորդ՝ ի դեմս ՀԱՂԹԱՍՅԱՆ, որի վրա, հիմքից մինչև գագաթ, պարուրաձև հարթականդակով կկերտվի մեր ինքնության նկարագիրը, մեր պատմությունը՝ նախահայր Նոյից մինչև մեր ժամանակակիցը: Սյան վերևի մասում կտեղադրվի թևատարած արծիվը, իսկ նրա ճիրաններում՝ մի շրջանակ՝ Արարատի և լեռան վրա՝ Նոյյան տապանի պատկերով:

Ինչո՞ւ հատկապես սյունը պետք է դառնա համայն հայության միասնության խորհրդանիշ: Դեռևս հնուց՝ մարդու առաջնային պաշտպանական միջոցներից էր ձողը: Դրան էին հենվում մեր նախնիները ճանապարհ գնալիս, ձողով էին պաշտպանվում գազաններից ու թշնամիներից: Սրածայր օբսիդիանի գլխիկով (ավելի ուշ՝ բրոնզե և ապա՝ երկաթե) ձողը դարձավ նիզակ՝ մահաբեր զենք, իսկ երբ դրա վրա զինվորը կայում էր թշնամու արնաշաղախ հագուստից մի պատառիկ (դրոշի նախատիպը), մարտիկն արդեն իսկ շրջակա միջավայրին ազդարարում էր իր հաղթանակը:

Ձողերի վրա էր հավաքվում ծածկը, ինչը փրկում էր մարդուն արևի կիզիչ ճառագայթներից, հորդառատ անձրևից ու կարկուտից, իսկ երբ ձողերը շրջանակվում էին քարերով կամ կավով, առաջանում էր օջախ: Հետագայում երկնքի և աստվածների բարկությունից խուսափելու նպատակով ձողով (սյունով) սկսեցին պահել երկինքը, որպեսզի այն չթափվի մահկանացուների գլխներին: Եվ որքան հզոր ու ուժեղ էր ցեղը (ժողովուրդը), այնքան բարձր ու հանդիսավոր էր

սյունը:

Բացի օգտապաշտական (ուտիլիտար) նշանակությունից (հենարան, դիմհար), հնում՝ սյունը խորհրդանշում էր նաև առնականություն, բերրիություն, ցեղի շարունակելիություն և, վերջապես, հաղթանակ: Այս բազմիմաստ խորհրդանիշը գտնվածներից ամենահինն է և ունի շուրջ 40 հազար տարվա պատմություն՝ Որոշ ցեղերի և ժողովուրդների կողմից այն կիրառվում էր՝ որպես մեծարանքի միջոց՝ հիշարժան իրադարձությունների, նշանակալի հաղթանակների, հաղթարշավների և մեծանուն մարդկանց պատվին:

Այսպիսով, սյունը՝ որպես ուժի, հաղթանակի, հույսի և ոգու խորհրդանիշ, չի կորցրել և դժվար թե երբևէ կորցնի իր նշանակությունը, քանի կա մարդկությունը: Սրա ապացույցներից է նաև վերջերս կառուցված աշխարհի ամենաբարձրահարկ շենք-հյուրանոցը Դուբայում, որն իր ձևով սյուն է հիշեցնում: Սյունը երբևէ չի կորցնի իր նշանակությունն առաջին հերթին բարոյահոգեբանական տեսանկյունից: Հնում, սկսած Շումերներից, Բաբելոնից և Եգիպտական թագավորությունից, սյուն կանգնեցնելու իրավունք էին ստանում միայն հաղթանակած թագավորներն ու կայսրերը: Միայն կայացած պետությունները, կրթված և ուժեղ ժողովուրդներն էին խոյացնում սյուններ՝ հայտնելով աշխարհին իրենց երկրի հզորության, անպարտելիության և առաջ գնալու նպատակամղվածության մասին: Օրինակ, Շահիրբաբգում Թամերլանի Ակ-Մառայ՝ պալատի դռանն արված գրությունը վկայում է. Եթե դուք կասկածում եք մեր հզորությանը, նայեք մեր կառույցներին: Տպավորիչ ճարտարապետությունը, դեպի երկինք ձգվող սյունները, դիմհարները, ծայրածողերն ու մինարեթները ցուցադրում են ժողովրդի և կայսրության ոգու հզորությունը: Եվ վաղուց արդեն ավանդույթ դարձած այս սկզբունքը պահպանվում է մինչ օրս:

Հրապարակում վեր խոյացող սյան հոգեբանական ազդեցությունը մարդկանց վրա անհերքելի է: Առաջին հարցը, որ առաջանում է, այն է, թե ոչ ու կամ ինչի՞ պատվին է կերտված սյունը: Ապա, մարդիկ սկսում են ուսումնասիրել շինության կառուցվածքը՝ գաղափարն ու իրականացվածը համադրելով սյունը կառուցած ժողովրդի մասին ունեցած պատկերացումներին, կատարելով համապատասխան եզրահանգումներ: Եվ որքան գեղեցիկ, հանդիսավոր և գաղափարական հենքով է կառուցված սյունը, այնքան ավելի մեծ է հիացմունքը, հարգանքը և հետաքրքրությունը այն կերտողների նկատմամբ:

ՀԱՂԹԱՍՅԱՆ խոյացմամբ-կառուցմամբ միանգամից կլուծվեն մի շարք կարևորագույն խնդիրներ: Գլխավորի մասին արդեն ասվել է՝ համազգային կառույցը կհամախմբի աշխարհի հայությանը սյան կառուցման ողջ ընթացքում: Սակայն առավել կարևորն այլ խնդիր է. ինչպե՞ս անել, որպեսզի աշխարհում ամենագեղեցիկ հրապարակներից մեկի՝ հանճարեղ Թամանյանի գեղեցկագույն կառույցի դիմագիծը չաղավաղվի, այլ ավելի հարստացվի՝ հաղորդելով նրան բոլորովին նոր իմաստավորում ու նշանակություն: Հարյուրավոր նախագծերը և ֆոտոկոլաժները համոզեցին՝ Հանրապետության հրապարակը՝ կենտրոնում ՀԱՂԹԱՍՅՈՒՆԸ (տես՝ լուսանկարը) ձեռք կբերի լիովին այլ, նոր նշանակություն, կստանա նոր հնչեղություն, սրբություն և, ինչու չէ, առեղծվածային նշանակություն: Հրապարակի ձվաձև տարածքը՝ կենտրոնում սյուն-միջուկով, արդեն իսկ հոգեբանորեն այլ կերպ կընկալվի, ինչպես հայկական տիեզերքի կենտրոն, որի շուրջ պտտվում է հայկական աշխարհը, ինչպես հենակետ և ամուր հենք՝ հայոց աշխարհի: Առաջ անցնելով մաքուր մշակույթի քննադատների ընդվզումներից՝ բերեմ դարձյալ Էյֆելյան աշտարակի օրինակը, որին դեմ էին այն ժամանակվա Ֆրանսիայի ամենահզոր ուղեղները այն պատճառաբանությամբ, որ աշտարակը կայլանդակի տոն-քաղաքի դիմագիծը: Այնինչ պատահեց հակառակը, աշտարակը դարձավ Փարիզի քնքշորեն պահպանվող ու փայփայվող խորհրդանիշը, և արդեն երբեք չի դադարի այդպիսին լինելուց: Միանգամայն վստահ եմ, որ այդպես կլինի և ՀԱՂԹԱՍՅԱՆ դեպքում: Հաղթապան հիմքում պետք է դրվի Հայաստանի գրանիտը, ապա Արևմտյան Հայաստանի (Թուրքիա), Արցախի, Ջավախքի, Իրանի, Ռուսաստանի և այսպես շարունակ, հատկապես նման հաջորդականությամբ, և կարծում եմ՝ այս տրամաբանությունը բացատրության կարիք չունի:

1991 թվականին Հայաստանի անկախացումն ու Արցախի ազատագրական պայքարում տարած

հաղթանակն անուրանելի էն, և հանդիսանում են հայ ոգու, կայունության, անձնագոհության, ազատության տենչանքի և արդարության արգասիքը: Մեր ժողովրդի պատմության համատեքստում դրանք անտարբեր չթողեցին հայկական Սփյուռքի և ոչ մի համայնքի, ոչ մի հայի: Ուստի վաղուց հասունացել է այս մեծագույն իրադարձության՝ Արցախի հաղթանակի պատվին, Հաղթասյուն կառուցելու անհրաժեշտությունը: Կրկնվում են, սակայն այս շինությունը պետք է կառուցվի ազգովին, աշխարհի բոլոր հայերի կողմից: Մա կդառնա պատվի և յուրաքանչյուր համայնքի արժանապատվության խնդիրը: Ավելին, եթե կառուցվի 2 հաղթասյուն՝ մեկը մեծ՝ Երևանում, և ավելի փոքրը՝ Ստեփանակերտում, ապա այս գաղափարն ավելի ծանրակշիռ կդառնա, ավելի իմաստալի ու խորը կլինի: Հաղթասյան կողքին անպայման պետք է կառուցվի նաև գլխավոր մուտք՝ պորտալ, հենց նույն գրանիտից, որոնց վրա գրառված կլինեն, թե որ երկրից և որ համայնքից է ուղարկված այս կամ այն գրանիտը, և տեղեկատվություն կտրվի տվյալ համայնքի մասին:

Միտումնավոր չենք անդրադառնում կառույցի տեխնիկական տվյալներին և չափերին, թեև ենթադրվում է, որ իր գաղափարին ու նպատակին համապատասխանելու տեսանկյունից սյունը մեկ երրորդով պետք է գերազանցի հրապարակը երիզող շինությունները: Չենք անդրադառնում, քանի որ հարցը խիստ մասնագիտական է: Սյան բարձրությունը, չափերը և մյուս չափորոշիչները կորոշեն նեղ մասնագետները՝ կոնստրուկտորները, ինժեներները, դիզայներները, ճարտարապետները: Որպես կարևորագույն՝ տրանսպորտային երթևեկի խնդրի լուծում՝ կառույցի համար առաջարկում ենք ևս մի կարևորագույն կոնցեպցիա, տեսակետ՝ այն կառուցել զրո հարկից՝ այսինքն՝ կառույցը կբարձրանա գետնի տակից® իսկ հենց հրապարակը տրամադրվի միայն տրանսպորտին, իսկ հետիոտնը կօգտվի միայն գետնուղուց, ուր տեղակայված կլինեն հուշանվերների և այլ խանութներ: Սյունը կլիտյանա ներքևից /գետնի տակից/ առաստաղի՝ ճեղքով ու ներքևից վերև կճառագայթեն լուսարձակների լույսերը՝ ստեղծելով տպավորություն, թե սյունը ձգվում է դեպի անվերջություն /երկինք/՝ դառնալով այն միջուկը, որը միացնում, կապում է երկիրն ու երկնակամարը:

Սակայն և այս նախագիծը, և գաղափարը անավարտ կամ թերի կմնան առանց մի կարևորագույն տարրի: Վաղուց արդեն հասունացել է Սփյուռքի՝ աշխարհասփյուռ հայության թանգարան ունենալու պահը: Եվ ավելի լավ տեղ, քան Հայաստանի ազգային պատմության թանգարանն է, չկա, որի ութանկյունն ինքն է պահանջում 4-5 հարկերի ապակե գմբեթ (թանկարժեք մի քար՝ հրապարակի օղակում)՝ իր դահլիճներով՝ յուրաքանչյուր համայնքին տրված հատուկ նշանակությամբ: Բնականաբար, ցուցանմուշների քանակն անմիջապես կսկսի աճել, և դրանց համար անհրաժեշտ կլինի լրացուցիչ տարածք, բայց կարևորը սա չէ, հետագայում կարելի է մեկ ուրիշ վայրում կառուցել ժամանակակից պահուստարան և ցուցասրահներ, իսկ գմբեթը կդառնա կենտրոնական ցուցադրահրապարակը և ողջ հայության նյութական ու ոգեղեն միասնության խորհրդանիշը (տես՝ նկարը):

Թևոս ՆԵՐՍԻՍՅԱՆ



ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔ ԲԱՐԵԿԱՄԻՍ

2011-04-19

Բաց նամակը, որ այսօր թարգմանաբար տպագրվում է աշխարհի տասնյակ թերթերում, հայ գրողի կոչն է թուրք հասարակությանը՝ հաղթահարել քաղաքական թաքունները և հրաժարվել ուրացության կարծրատիպից:

Թեպետ ես վկայում եմ իմ անձի մասին, իմ վկայությունը ճշմարիտ է, որովհետև գիտեմ, թե որտեղից եկա և ուր եմ գնում:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ,
ԳԼՈՒԽ Ը, 14

Ո՞վ մարգարե, սուրբ պատերազմ մղիր... կեղծարարների դեմ և խիստ եղիր նրանց նկատմամբ, նրանց տեղը դժոխքն է...

ՂՈՒՐԱՆ, ՍՈՒՐԱՀ՝ԱԼ-ԹՈՒԲԵՀ՝ 73

Մենք ծանոթացանք պատահաբար, միջազգային մի գրական փառատոնի օրերին: Ջրույցի ընթացքում պարզվեց՝ դու թուրք գրող ես, ես՝ հայ: Այն ժամանակ (և հետագա մեր հանդիպումներին) շատ բան չհասցրի ասել, բայց չասված խոսքերը գուղձի պես խցանում են կոկորդոս, ուստի և գրում եմ այս նամակը որպես խոստովանանք ու երկխոսության հրավեր: Գրում եմ, որպեսզի թոթափեմ հիշողությամբ պարտադրված ատելությունը, սրբեմ-աղբանոց նետեմ յուրաքանչյուր թուրքի մեջ իմ ժողովրդի թշնամուն տեսնելու կանխադրույթը, որը չի լքում մեզ շուրջ 100 տարի... Ճիշտ այդքան ժամանակ է, ինչ մենք ներկան ապրում ենք անցյալի մեջ, բայց պիտի լայնախոհություն դրսևորենք գոնե ապագան ազատագրելու այդ նույն անցյալի մղձավանջից:

Արդեն գիտես՝ ազգանունս Անանյան է, որ ստուգաբանվում է ան-Անի-յան, այսինքն՝ Անին կորցրած, անԱնի հայ: Իմ նախնիները 1319 թ. Հայաստանի 11-րդ մայրաքաղաք Անիի մեծ երկրաշարժի արհավիրքի պատճառով գաղթել են իրենց տոհմիկ բնօրրանից, լքել հազարամի եկեղեցիների շքեղ ոստանը և եկել-ծվարել են Հյուսիս-արևելյան Հայաստանի Կողբ գյուղում: Իմ տոհմածառը սերում է Հայոց Բագրատունյաց իշխանական զարմից՝ մինչև մեկամյա իմ Անի թոռնուհին, և ամեն պատեհ առիթով հայ-թուրքական փակ սահմանի փշալարերի միջով փնտրում եմ պապենական տանս ավերակները... հեռադիտակով: Եվ ամեն անգամ նախանձով եմ նայում քուրդ անհոգ հովվին ու քաղաքի կիսաքանդ պարսպի ստվերում անհոգորեն մակաղած ոչխարի հոտին...

Զէ՞, ինձ ճիշտ չհասկացար, սա ընդամենը ազգային գենի մեջ անթեղված կարոտախոտի մուխն է՝ ֆրանսերեն Force majeure՝ ձևակերպումով, բայց ո՞չ այն պահանջատիրությունը, որ արդեն ինը տասնամյակ, քուն թե արթմնի խռովում է Հայոց ցեղասպանության 1,5 միլիոն զոհերի (որ հիմա բնական վերարտադրությամբ կհատեր 5 մլն-ի սահմանագիծը) և նույնքան էլ տարագիրների աշխարհասփյուռ շառավիղների հոգիները՝ սպասելով իր արդար լուծմանը:

Աստծո սիրուն, միայն թե դու էլ չկրկնես Թուրքիո պաշտոնական հանկերգը, իբր, 1893-1923 թթ. հայերի ցեղասպանություն չի եղել, այլ սոսկ ցավալի ջարդեր... և որ (բացահայտ ցինիզմ) առաջին համաշխարհային պատերազմի խառնաշփոթից օգտվելով՝ հայերն իրենք են կոտորել՝ անպաշտպան թուրքերին... Եվ մանավանդ որ պետք է ճշմարտության բացահայտումը հանձնել պատմաբանների հանձնախմբի դատին:

Պատմությունն իր դատավճիռը վաղուց է կայացրել. տոննաներով փաստաթղթեր, հայ և օտար ականատեսների սահմոկեցնող վկայություններ, կինովավերագրեր, բռնագավթված ու ավերված շեներ, ամայացած հողեր, կրոնափոխ եկեղեցիներ...

Միրիայի Տեր-Ջոր անապատում այսօր էլ այցելուների աչքը կուրացնում է հայ անթաղ տարագիրների կմախքների ֆոսֆորը...

Աշխարհը վաղուց գիտի անհերքելի ճշմարտությունը, Էրդողանն էլ գիտի, Օրաման էլ, վստահ եմ՝ նաև դու: ԱՄՆ պետքարտուղար տիկին Քլինթոնն էլ գիտի, թեպետ մի ձեռքով փարիսեցիորեն ծաղիկներ է դնում Ծիծեռնակաբերդում Մեծ եղեռնի հուշարձանին, իսկ մյուս ձեռքով «ժողովրդավարության միջնաբերդ» Մայիտակ տնից երկակի ստանդարտներ է ձևում՝ անկեղծության պահին խոստովանելով. «Յավոք, դիվանագիտության մեջ հաճախ պետական շահերն ավելի կարևոր են, քան ճշմարտությունը»:

Ամերիկյան Կոնգրեսն ու Սենատն էլ գիտեն, թեև ամեն անգամ զցել-բոնելով քարկտիկ են խաղում, տաքուհովի մեջ պահելով մի ողջ ժողովուրդ՝ Հայոց ցեղասպանության հարցը օրակարգ մտցնելու քաղաքական անբարո առևտրով... Երկդիմի, եռադեմ, բազմադիմակ խաղ...

Գուցե ընդհատե՞նք դիմակահանդես – զավեշտախաղի ավանդույթը, երբ աշխարհի աչքին թոզ փչելու համար Վանում վերականգնվում է Ախթամարի Սուրբ խաչ եկեղեցին՝ առանց խաչի ու պատարագի և զուգընթաց՝ Անիի քրիստոնեական Մայր տաճարում նամագի ծես է արվում. իսկական ծաղր քրիստոնեությունը պետական կրոն հռչակած աշխարհի առաջին երկրին (301թ.): Այսօր իրերն ու երևույթներն իրենց անուններով կոչելու ժամանակն է, ժամանակն է ոչ թե բարոյականության խրատներ կարդալ, այլ ապրել բարոյական սկզբունքներով: Հենց այս հայեցակարգն էլ ընկած է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի»(1948 թ.) հիմքում, որի տակ, ի դեպ, դրված է նաև Թուրքիայի Հանրապետության ստորագրությունը, և որն ասես շարադրված է Հայոց ցեղասպանության օրինակով:

Բայց բնավ քեզ հայտնի հանրագիտարանային ճշմարտությունները չեն պատճառ, որ գրում եմ այս նամակը: Երբ ամիսներ առաջ իմ հրավերով Երևան այցելեցիր, հարցրիր.

–Ինչ խորն է նստած ատելությունը հայ մարդու մեջ, մի՞թե 21-րդ քաղաքակիրթ դարում հնարավոր է սրբագործել անցյալի ողբերգությունը, երբ արդեն նորանկախ երկիր ունեք և այսքան գեղեցիկ մայրաքաղաք:

Որքա՞ն համահունչ էր հարցդ թուրքական «Հուրիեթ» թերթի թղթակցի զարմանքին.

–Ինչպես հասկանալ՝ Արարատ լեռը օտար երկրի տարածքում է, բայց գրեթե բոլոր հայ պոետները գովերգում են իբրև հայոց Մայր լեռ...

Ես նրան պատասխանեցի.

–Արարատը մեր էության մեջ է, թերևս հենց մեր էությունն է, որ ոչ ոք չի կարող մեզնից օտարել: Արարատը մեր ինքնության հիշողությունն ու վերածնության խորհրդանիշն է: Իսկ եթե անկեղծ լինենք, լուսինն էլ ձերը չէ, բայց կեռ յաթաղանի պես թառել է թուրքական դրոշի վրա...

Ես գիտեմ մի անհերքելի ճշմարտություն, որ փոխանցվում է սերնդեսերունդ: Բերանացի գիտեմ, ինչպես մետրոպյան հինավուրց այբուբենը (405 թ.): Դա գիտեն բոլոր հայերը՝ հասարակ հողագործից մինչև երկրի Նախագահ. Ցեղասպանությունը վաղեմության ժամկետ չունի, ինչպես որ մեր ազգային ցավի հիշողությունը՝ մթազնելու որևէ հեռանկար: Հիմա դուք եկել, հորդորում եք մոռանա՞լ անցյալը:

Ինչպե՞ս մոռանալ 1,5 միլիոն անմեղ զոհերին և գաղթի քարավանները, որոնց ժառանգները չեն կորցնում իրենց պատմական հայրենիքում վերահաստատվելու հույսն ու հավատը :

Մոռանա՞լ 1915 թ. ապրիլի 24-ի բարդուղիմետոյան գիշերը, երբ այլատյացության կացնի մի հարվածով գլխատվեց արևմտահայ մտավորականության սերունդը՝ Միամանթո, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, ժամանակ անց՝ Գրիգոր Զոհրապ...

Մոռանա՞լ հայ հոգևորական, ջարդերի ականատես Գրիգորիս Բալաքյանի «Հայերու գողգոթան» եղերերգությունը (1924 թ.), որի խորագիրն իսկ կանխում է թեմայի մասին հարցումը:

Մոռանալ արաբ ժողովրդի սրտացավ բարյացակամությունը, որն ապաստան տվեց եղեռնապուրծ

հայ խլակներին՝ իր մի կտոր հացը կիսելով օտարազգի մերձավորի հետ:

Մոռանալ նորվեզացի մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենին, որ Ազգերի լիգայի որոշմամբ (1924 թ.) Նանսենյան անձնագիր, այսինքն՝ աշխարհաքաղաքացու վկայական տվեց տարբեր երկրներում անհայրենիք դեգերող, Մեծ եղեռնից մազապուրծ 320 հազար հայի:

Մոռանալ ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» (1934 թ.) վեպը՝ թուրքական բանակի դեմ հայ բնակչության հուսահատ, բայց հերոսական ինքնապաշտպանության մասին...

Մոռանալ Ադուլֆ Հիտլերի լկտի ինքնարդարացում-հրահանգը հրեաների կոտորածի առիթով գործի անցեք, հիմա ու՛ր է հիշում հայերի ցեղասպանությունը (1938 թ.):

Որ մեկը թվեմ...

Հիշում եմ, փոքր էի ու երբ հագում էի, Անուշ տատս, որ բարության և կարեկցանքի մարմնացում էր, անմիջապես վրա էր բերում.

–Առողջություն քեզ, թող թուրքի լամուկը հագա:

Մի օր հարցրի. այ տատ, ի՞նչ է արել մեզ անծանոթ թուրքի տղան, որ պատեհ – անպատեհ անիծում ես:

Եղեռն չտեսած արևելահայ տատս լռելյայն հայացքը ցած խոնարհեց, բայց երբ հերթական անգամ տրապիզոնցի գաղթական Միհրանին հաց էր տալիս, պատմեց գազրելի եղելությունը: Միհրանն այնքան նիհար էր, որ անգամ անունն էին սղել և Մրան էին կոչում: Նա անցել էր ցեղասպանության դժոխքի բոլոր պարունակներով. 1915 թվին նրա աչքի առաջ կացին-եղանով գազանաբար խոշտանգել էին վեց երեխաներին, սվինահարել կնոջը, կրակել նրա վրա, տունը թալանել ու հրդեհել... Քուրդ հարևանը ծանր վիրավոր Միհրանին թաքցրել էր մարագում, խնամել և ապա ամռանը յայլաները հասցնելով՝ փրկել նրա կյանքը:

Հիմա էլ, տասնամյակներ անց, ոսկոր ու կաշի Մրանը երազներումս այցելում է ինձ, մուրացկանի ուսապարկում անբաժան աճյունասափորը՝ մի բուռ մոխիր իր հրկիզված օջախից, և շուրթերին իր որբացած բարբառը.

–Քիչիկ մը հաց կուտաս...

Դեմքի խորշոմներից առվակներով հոսում էր արցունքը, և նրա հետ լալիս ու հեծեծում էր կորուսյալ Վանա ծովը.

Եթե հնար լիներ փոխել հարևանին, իմ ժողովուրդը կհավաքեր ունեցվածքը, համաշխարհային քաղաքակրթությանը տված իր մշակութային արժեքները և կգնար ուր աչքը կտրեր: Բայց երկիրը բնակարան չէ, որ ուզած պահին փոխես կամ փոխանակես:

Եթե իմանայիք, թե ինչ տառապանք է ամեն առավոտ բաց վերքի նման տեսնել Արարատը, և հիշել, հիշել... Երևի վաղուց էիք բուլդոզերներով քանդել ու պատգարակներով տեղափոխել բիրլիական լեռը հավասարեցնելով հողին...

Եթե...

Սակայն, պատմությունը պայմանական եղանակ չի հանդուրժում:

Օրերս թուրքական կայքերից մեկում իրավապաշտպան Էրոզ Էոլքորայը ուշագրավ դիտարկում էր արել, թե ինչու՞ Հայոց ցեղասպանությունը տակավին քաղաքական թաբու է, չէ որ ժամանակակից Թուրքիան, ի դեմս Նոր հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքի, պատասխանատվություն չի կրում Օսմանյան կայսրության գործած երիտթուրքական ոճրի

համար: Իսկապես, ինչու...

Նա թվարկում է երեք պատճառ, որոնք անցյալ դարասկզբի Թուրքիան պորտալարով կապում են մեր օրերի հետ: Առաջինը՝ Թուրքիան՝ թուրքերին՝ ծրագիրն էր, որով Անատոլիան մաքրվեց հայ, հույն, հրեա, քրիստոնյա և այլ տարրերից: Նրա կարծիքով, այդ հողերի վրա վերջին 96 տարում իրագործվել է 10 ցեղասպանություն (չորսը բաժին է հասել քրդերին), որոնցից ամենազանգվածայինն ու կազմակերպվածը Հայոց ցեղասպանությունն էր:

Երկրորդն առնչվում է Ազատագրության պատերազմի հետ, որի ֆինանսական աղբյուրը բոլշևիկյան Ռուսաստանի տրամադրած զենքի և դրամի օգնությունից գատ, հայերից բռնագավթված ինչքն ու հարստությունն էր:

Եվ վերջապես երրորդ պատճառը՝ Հայոց ցեղասպանությանը մասնակից ոճրագործները, ում ձեռքերը թաթախված են անմեղ արյան մեջ, նորահիմն հանրապետության կառավարական և դիվանագիտական ընտրյալների ցանկում էին: Ահա ինչու է այսօր ձախողում Թուրքիայի ժառանգորդ պետությունը հարցի լուծման բոլոր ծրագրերը:

Սա էս չեմ ասում, սա ասում է թուրք անկողմնակալ մտավորականը, հավելելով, որ Թուրքիայի պետությունը միայն մի ելք ունի ուրացության խավար փակուղուց՝ ապավինել ապաշխարանքի լույսին: Այլապես ամեն անգամ Հայոց ցեղասպանություն եզրը լսելով, մշտապես կորցնելու է ողջախոհությունը՝ հայտնվելով խելակորույս վիճակում: Իսկ խելակորույս պետությունը, իր կեղծ ժողովրդական կարգախոսներով որքան էլ երկու ձեռքով և երկու ոտքով թակի Եվրամիության դռները, այնտեղ մշտական գրանցում չպետք է ստանա:

Գերմանացիները խիզախեցին ճանաչել հրեական հոլոքոստը, ռուսներն էլ, 70 տարի անց, ընդունեցին լեհական Կատինը: Հերթը ձեռն է: Ուրեմն, մի հապաղեք ճանաչել Հայկական ցեղասպանության պատմական անհերքելի փաստը: Սակայն քաղաքականությունը թողնենք քաղաքագետներին ու պետական այրերին, մենք գրող ենք, և մեր պարտքն է միմյանց ճանաչեցնել երկու հասարակություններին գրի և խոսքի միջոցով, համոզել, որ Ցեղասպանության ընդունումը ոչ թե կնսեմացնի թուրք ազգին, այլ ընդհակառակը՝ կվեհացնի: Քանի դեռ յուրաքանչյուրիս մեջ չի կայացել Հայոց ցեղասպանության Նյուրնբերգը, ավելին՝ ոճիրը կեղծելով կամ լռության մատնելով, ակամա դառնում ենք դրա մասնակիցը:

Գրքիդ շնորհանդեսին դու խոսեցիր շեմերը հաղթահարելու մասին: Շատ գեղեցիկ խոսեցիր: Ասացիր, որ շեմեր կան նաև ժողովուրդների և երկրների միջև, որոնք պետք է ոչ թե արգելք լինեն, այլ անցակետ: Հայ-թուրքական սահմանը դեռևս փակ է, և դու շատ ժամանակ կորցրիր Անկարայից մինչև Երևան, մինչդեռ կուզենայիր ուղիղ թռիչքով հասնել՝ ձեռք ազգային թյուրքություններում և հայ ժողովրդական տաղիկներում գովերգվող “սրտից սիրտը տանող” ճանապարհով: Երբեմն էլ շեմերի վրա կրակ է լինում, ասացիր, և եթե շեմն անցնելու վարանումը երկար տևի, ապա օտարացման տառապանքը կարող է վերածվել հիվանդության, ախտի:

Ավա՛ դ, շեմն անցնելու համար բաց դուռ է հարկավոր, իսկ դուք կրնկակոխ փակել եք բոլոր դռները՝ և հոգու, և օջախի, և երկրի առջև...

Մի բան ճշմարիտ է, եթե վաղը Ցեղասպանության փաստը ԱՄՆ-ն էլ ընդունի, խուլուհամր ձևացող մյուս երկրներն էլ, բանակցությունների սեղանի շուրջ հայերն ու թուրքերն են նստելու, - և հենց թուրք հասարակությանն է պատկանում վերջին խոսքի իրավունքը:

Բարեբախտաբար, ժխտողականության անթափանց պատն արդեն ճաքեր է տալիս: Ցեղասպանությունը հրապարակավ ընդունել են Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկը, անվանի պատմաբան Թաներ Աքչամը, հրատարակիչ Ռազրփ Զարաքոլուն..., հարյուրավոր այլ

խիզախ անհատներ, ովքեր չեն ուզում հաշտ ապրել ստի ու կեղծիքի հետ:

Հրանտ Դինքի սպանությունը ցնցեց աշխարհը (շա՛տ բան է փոխվել գաղթական Միհրանի ժամանակներից), և նրա թաղման օրը ծայր առավ Ես Դինքն եմ, ես հայ եմ հանրային շարժումը: 2010 թ. Ստամբուլի կայարաններից մեկում (որտեղից 1915-ին սկսվեց հայ մտավորականների բռնագաղթը), տեղի ունեցավ բողոքի ցույց և մոմավառություն: Վերջերս էլ թուրք մտավորականությունը համացանցով ստորագրահավաք կազմակերպեց Ցեղասպանության ճանաչման օգտին:

Երկխոսությունն արդեն սկսվել է, և ոճրի դատապարտումը պահանջում է հասարակական բազմաձայնություն:

Էլի մեկ ձայն:

Քո՞ ձայնը:

Հանուն պատմական ճշմարտության:

Հանուն նրանց, ովքեր չեն պղծելու իրենց շուրթերն անձեքով:

Հանուն նրանց, ովքեր գալու են Պատմության բեռն ու Ապագայի մարտահրավերները ժառանգելու մաքուր խղճով ու մաքուր ձեռքերով:

Հանուն մեր զավակների, ում նույն արևն է ջերմացնում՝ անկախ ազգությունից, մաշկի գույնից, խոսվածքից և բարոյական ընտրությունից:

ԼԵՎՈՆ ԱՆԱՆՅԱՆ

Հայրենադարձներ



Հայրենիքը տուն է, իսկ արտերկիրը՝ հյուրանոց

2011-04-18

-Պարո՛ն Բաղդասյան, ե՞րբ եք հայրենադարձվել:

-2005 թվականին եկա Հայաստան: Հայրենիքիս նկատմամբ ունեցած զգացումներս, հայկական դաստիարակությունս ինձ միշտ մտորել են տվել Հայաստանի մասին, եւ երազել եմ իմ բույնը հյուսել Հայրենիքում: Հայրենադարձվել եմ եղբորս՝ Պիերի եւ

մայրիկիս՝ Անիի հետ. Հայրս մահացավ 1993 թվականին: Հայրենիքը տուն է, իսկ արտերկիրը՝ հյուրանոց, ժամանակավոր կացարան, որը մի օր պիտի թողնես: Ճիշտ է, ծնվել, մեծացել ենք Լիբանանում, սովորել ենք արտասահմանում, սակայն հայրենիք սերը հզոր է ամեն ինչից, մենք գիտեինք, որ մի օր պիտի գանք Հայաստան: 10 հոգով վերադարձանք, 10 հայ էլ ավելացավ Հայաստանում:

-Առաջին անգամ ե՞րբ եք եղել Հայաստանում եւ ի՞նչ տպավորություններով եք մեկնել:

-Առաջին անգամ եկել է եղբայրս, 1993-ին եկել եմ ես: Եկանք, երբ Հայրենիքը մեջքը չէր շտկել երկրաշարժի ծանրությունից, Երբ Արցախյան գոյամարտը չէր հանգուցալուծվել, երբ քաղաքում, երկրում մութ էր, ցուրտ եւ տխուր եւ մենք հասկացա նք, որ սա է մեր երկիրը եւ մեր երկիրը մենք պիտի կառուցենք:

Սկզբում փաթեթավորման գործ ձեռնարկեցինք, որն այնքան էլ արձագանք չգտավ Հայաստանում: Հետագայում ձեռնարկեցինք շոկոլադի գործը, հիմնեցինք շոկոլադի գործարան Աշտարակում:

Անցյալ տարի բացել ենք շոկոլադի խանութ-սրահ Տերյան փողոցում: Խանութը կոչվում է «Գուրմե-Դուրմե»: Գուրմե նշանակում է ախորժաբույր, իսկ դուրմեն հայերեն բառ է եւ նշանակում է շոկոլադ:

-Երբեւէ չէ՞ք զոջացել վերադարձի համար:

-Ցանկացած երկրում, քաղաքում, ընտանիքում առաջանում են խնդիրներ, հիասթափություններ, ինչու չէ... Երբեմն զոջում ես զայրացած պահերիդ, բայց երբ խաղաղվում ես, անցնում է ամեն բան:

-Սփյուռքի նախարարությունն ի՞նչ դերակատարում, մասնակցություն է ունեցել ձեր վերադարձի հարցում:

-Մենք ավելի վաղ ենք եկել Հայաստան. Առաջին անգամ՝ 1993-ին, հետո՝ 2005-ին: Այսինքն՝ Սփյուռքի նախարարությունը դեռ չէր կազմավորվել: Մենք լավ բարեկամներ ենք Սփյուռքի նախարարության հետ. Նրանք ընդունում են մեր առաջարկները, քննարկում են, ընթացք տալիս: Սփյուռքի նախարարությունը մեզ չի անտեսում, չի մոռանում: Տիկին Հրանուշ Հակոբյանը շատ լավ ծրագրեր է ձեռնարկում, որոնք շատ հայերի կօգնեն հայրենադարձվել, իրենց բախտը, ճակատագիրը մեկընդմիջտ կապել Հայրենիքի հետ:

-Քաջալերո՞ւմ եք, որ ուրիշները եւս հայրենադարձվեն, հաստատվեն Հայաստանում:

-Իհարկե, դա իմ ամենօրյա խոսակցության թեման է:

Ամեն պահ ես կարող եմ տեղափոխվել ուրիշ երկիր, դրսում աշխատել, սակայն ինձ համար կարելորդ այստեղ աշխատելն է ու այստեղ ապրելը: Նույնը մշտապես ասում եմ դրսում բնակվող իմ ընկերներին, ծանոթներին, բարեկամներին: